ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԲՆԱԿՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՔՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀՊԵԿ-ԳՀԾՁԲ-22/4

ք.Երևան «06» ապրիլի 2022թ.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն, ի դեմս գլխավոր քարտուղար Է.Գևորգյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Քաստոմս Բրոքեր» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Մ. Սահակյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է բնակտարածությունների մաքրման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-

ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է 39 500 000 (երեսունինը միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.1.1 Պայմանագրի գնից՝ մինչև 3 555 000 (երեք միլիոն հինգ հարյուր հիսունհինգ հազար) ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար Դեկտեմբեր ամսվա համար: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Կատարողին վճարումներ չեն կատարվում:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի

փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 16 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պետական եկամուտների կոմիտե	«ՔԱՍՏՈՄՍ ԲՐՈՔԵՐ» ՍՊԸ
ք. Երևան, Մ. Խորենացի 3,7	ք. Տաշիր, Պուշկինի փ., 5 թղմ., տ. 113
ՀՎՀՀ 02647057	ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ ՓԲԸ
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	Հ/Հ 1150001873163163
Հ/Հ 900011054013	ՀՎՀՀ 06959305
ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղար	տնօրեն Մեսրոպ Սահակյան
Է.ԳԵՎՈՐԳՅԱՆ _____	_____
/ստորագրություն/	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
«06» ապրիլի 2022 թ. կնքված
ՀՀՊԵԿ-ԳՀԾՁԲ-22/4 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Անվանումը և գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Տեխնիկական բնութագիրը	Չ/Մ	Քանակը	Պլանավորած գին /ՀՀ դրամ/	Արդյունքի հանձնման վայրը	Կատարման ժամկետը
Բնակտարածու_թյունների մաքրման ծառայություններ 1 CPV 90911100/16	**Ամենօրյա մաքրման ծառայություններ** 1. թվով 43 /682.3 քմ./ աշխատասենյակների և դրանցում առկա գույքի մաքրում ընդհանուր օգտագործման տարածքների՝ թվով 3 հատ մուտքերի, թվով 1 դահլիճի, միջանցքների, աստիճանավանդակների և/կամ այլ տարածքների (այդ թվում՝ դրանցում առկա գույքի) մաքրում թվով 23 հատ (178.7քմ.) սանհանգույցների մաքրում (2 ժամը մեկ)՝ 39 հատ զուգարանակոնքերի, 26 հատ լվացարանների մաքրում և հատուկ նյութերով ախտահանում, թվով 30 հատ հայելիների փայլեցում, ինչպես նաև հատակի մաքրում և լվացում հատակի (այդ թվում՝ մանրահատակի, սալիկապատ հատակի, լամինատե հատակի) մաքրում, ինչպես նաև առկայության դեպքում գորգերի, ուղեգորգերի, կավրոլինների և/կամ գորգանման այլ ծածկույթների մաքրում	դրամ	1	20 000 000	**Շիրակի մարզ – ընդհանուր՝ 55 500 քմ** 1. ք. Գյումրի, Թբիլիսյան խճուղի, թիվ 2/14 (շենքերի հարկերի քանակը՝ 1, շինության մակերեսը՝ 5500, տարածքի մակերեսը՝ 50 000 քմ) Տվյալ հասցեում ՀՀ ՊԵԿ աշխատակիցների թիվը կազմում է՝ 54 անձ:	Ծառայության մատուցումն իրականացվում, պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված առավելագույնը մինչև 365 օրացույցային օր:

			աղբամանների դատարկում, մաքրում, աղբի նոր տոպրակների տեղադրում, շենքից աղբի հեռացում					
			Երթևեկելի մասի ամբողջ լայնությամբ, ավլող մեքենայի միջոցով իրականացնել մեքենայացված մաքրում՝ 46 000 քմ					
			ավլել, մաքրել, ինչպես նաև լվանալ /բացառությամբ ձմռան ամիսներին/ բնակտարածքը՝ 2500քմ և դարպասների հարակից 100քմ տարածքը, հավաքել աղբը և թափոնները՝ տեղավորելով դրանք համապատասխան աղբամաններում					
			Տարածքում առկա բոլոր աղբամաններում կուտակված աղբի հեռացում, յուրաքանչյուր անգամ աղբարկղերը դատարկելուց մաքրել հարակից 1.5-5քմ տարածքը: Աղբամանների լվացում՝ 2 օրը մեկ:					
			մշակել տարածքում առկա կանաչապատ հատվածները, հնձել խոտը, խնամել ծաղիկները, թփերը ծառերը /այդ թվում, ըստ անհրաժեշտության նաև էտել/ և այլ բույսերը, հեռացնել մոլախոտը /այդ թվում նաև մայթեզրերից և ասֆալտապատ տարածքներից հատուկ նյութերի միջոցով/: 1500քմ					
		Շաբաթական մաքրման ծառայություններ						
			ապակյա դռների, ինչպես նաև ներքին և արտաքին ցուցանակների մաքրում /շաբաթը 2 անգամ/					
		Ամսական մաքրման ծառայություններ						
			առաստաղների և պատերի փոշեզրկում, դրանց վրայի մաքրվող հետքերի, սարդոստայնների և այլ հետքերի					

			վերացում, օդորակիչների և առկա այլ գույքի վրայից հետքերի մաքրում					
			587.9 քմ. պատուհանների, 75.2 քմ ապակյա վիտրաժների և 27.6 քմ. ապակեպատ միջնորմների, ինչպես նաև առկայության դեպքում ճաղավանդակների, բազրիքների, ճաղաշարերի լվացում					
			թվով 23 հատ (178.7 քմ.) սանհանգույցների սալիկների, պատերի, առաստաղների մաքրում՝ հատուկ ախտահանող նյութերով					
			դրսի աղբամանների լվացում և ախտահանում հատուկ նյութերով՝ ամսական 2 անգամ					
		Եռամսյակային մաքրման ծառայություններ						
			Ջահերի և/կամ այլ լուսատուների լվացում (փետրվար, մայիս, օգոստոս, նոյեմբեր)					
			տարածքում առկա ցուցանակների, տեղեկատվական վահանակենրի, լուսատուների, հենասյուների, դարպասների, արգելափակոցների և այլ սարքերի ու սարքավորումների, տարածքում առկա տաղավարների արտաքին պատերի մաքրում (փետրվար, մայիս, օգոստոս, նոյեմբեր)					
			Անգարներում և ծածկի տակ գտվող այլ տարածքներում իրականացնել առաստաղների, պատերի և առկա իրերի փոշեզրկում, հատակի մաքրում, ավլում, լվացում, կուտակված աղբի հեռացում (մարտ, հունիս, սեպտեմբեր, դեկտեմբեր)					
		Տարեկան մաքրման ծառայություններ						

			շենքերի ճակատային մասի լվացում (1417 քմ)՝ տարին մեկ անգամ (հուլիս ամսին)					
			դիտահորերի /ինչպես նաև կոյուղու/, ջրահեռացման համակարգերի մաքրում /ըստ պատվիրատուի պահանջի/					
			Ձյան տեղումների դեպքում մաքրման ծառայություններ					
			Շենքերի տանիքների վրա գոյացած ձյան, սառույցի, ինչպես նաև տանիքների եզրերից կախված սառցալեզվակների մաքրում՝ պատվիրատուի պահանջով /աշխատանքները պետք է սկսեն համապատասխան ծանուցումը ստանալուց հետո ոչ ուշ քան մեկ ժամվա ընթացքում/					
			կատարել ձյան մաքրման և հեռացման աշխատանքներ՝ այդ թվում մեքենայացված՝ հատուկ սարքավորումների միջոցով: Տարածքից հեռացնել կուտակված ձյունը, սառույցը, բանուկ մասում շաղ տալ ավազ և աղ /տեղումների ընթացքում՝ առնվազն ժամը մեկ/ /48 500քմ/					
Բնակտարածու_ թյունների մաքրման ծառայություններ 2 CPV 90911100/18			**Ամենօրյա մաքրման ծառայություններ**	դրամ	1	19 500 000	**Սյունիքի մարզ – ընդհանուր՝ 29 450.6 քմ** 1. գ.Կարճևան Մայրուղի-4 (շենքերի հարկերի քանակը՝ 3, շինության մակերեսը՝ 3050.6, տարածքի մակերեսը՝ 26 400 քմ) Տվյալ հասցեում ՀՀ ՊԵԿ աշխատակիցների թիվը կազմում է՝ 25 անձ:	Ծառայության մատուցումն իրականացվում, պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված առավելագույնը մինչև 365 օրացույցային օր:
		1.	թվով 26 /388 քմ./ աշխատասենյակների և դրանցում առկա գույքի մաքրում					
			ընդհանուր օգտագործման տարածքների՝ թվով 8 հատ մուտքերի, թվով 2 դահլիճների, միջանցքների, աստիճանավանդակների և/կամ այլ տարածքների (այդ թվում՝ դրանցում առկա գույքի) մաքրում					
			թվով 13 հատ (130քմ.) սանհանգույցների մաքրում (2 ժամը մեկ)՝ 27 հատ զուգարանակոնքերի, 20					

			հատ լվացարանների մաքրում և հատուկ նյութերով ախտահանում, թվով 8 հատ հայելիների փայլեցում, ինչպես նաև հատակի մաքրում և լվացում						
			հատակի (այդ թվում՝ մանրահատակի, սալիկապատ հատակի, լամինատե հատակի) մաքրում, ինչպես նաև առկայության դեպքում գորգերի, ուղեգորգերի, կավրոլինների և/կամ գորգանման այլ ծածկույթների մաքրում						
			աղբամանների դատարկում, մաքրում, աղբի նոր տոպրակների տեղադրում, շենքից աղբի հեռացում						
			Երթևեկելի մասի ամբողջ լայնությամբ, ավլող մեքենայի միջոցով իրականացնել մեքենայացված մաքրում՝ 22 000 քմ						
			ավլել, մաքրել, ինչպես նաև լվանալ /բացառությամբ ձմռան ամիսներին/ բնակտարածքը՝ 2000քմ և դարպասների հարակից 100քմ տարածքը, հավաքել աղբը և թափոնները՝ տեղավորելով դրանք համապատասխան աղբամաններում						
			10 հատ միջին /250-300լ/ աղբամանների տեղադրում /աղբամանների ձևը համաձայնեցնել պատվիրատուի հետ/ և տարածքում առկա բոլոր աղբամաններում կուտակված աղբի հեռացում, յուրաքանչյուր անգամ աղբարկղերը դատարկելուց մաքրել հարակից 1.5-5քմ տարածքը: Աղբամանների լվացում՝ 2 օրը մեկ:						
			մշակել տարածքում առկա կանաչապատ հատվածները, հնձել խոտը, խնամել ծաղիկները, թփերը ծառերը /այդ թվում, ըստ անհրաժեշտության նաև էտել/ և այլ բույսերը, հեռացնել մոլախոտը /այդ						

		թվում նաև մայթեզրերից և ասֆալտապատ տարածքներից հատուկ նյութերի միջոցով/: 2400 քմ					
		Շաբաթական մաքրման ծառայություններ					
		սպասարկման և/կամ ընդհանուր սրահների ապակիների (65 քմ.), ապակյա դռների, ինչպես նաև ներքին և արտաքին ցուցանակների մաքրում /շաբաթը 2 անգամ/					
		Ամսական մաքրման ծառայություններ					
		առաստաղների և պատերի փոշեզրկում, դրանց վրայի մաքրվող հետքերի, սարդոստայնների և այլ հետքերի վերացում, օդորակիչների և առկա այլ գույքի վրայից հետքերի մաքրում					
		135.2 քմ. պատուհանների և 15 քմ ապակեպատ միջնորմների, ինչպես նաև առկայության դեպքում ճաղավանդակների, բազրիքների, ճաղաշարերի լվացում					
		թվով 13 հատ (130քմ.) սանհանգույցների սալիկների, պատերի, առաստաղների մաքրում՝ հատուկ ախտահանող նյութերով					
		դրսի աղբամանների լվացում և ախտահանում հատուկ նյութերով՝ ամսական 2 անգամ					
		Եռամսյակային մաքրման ծառայություններ					
		Ջահերի և/կամ այլ լուսատուների լվացում (փետրվար, մայիս, օգոստոս, նոյեմբեր)					
		տարածքում առկա ցուցանակների, տեղեկատվական վահանակենրի, լուսատուների, հենասյուների, դարպասների, արգելափակոցների և այլ					

			սարքերի ու սարքավորումների, տարածքում առկա տաղավարների արտաքին պատերի մաքրում (փետրվար, մայիս, օգոստոս, նոյեմբեր)					
			Անգարներում և ծածկի տակ գտվող այլ տարածքներում իրականացնել առաստաղների, պատերի և առկա իրերի փոշեզրկում, հատակի մաքրում, ավլում, լվացում, կուտակված աղբի հեռացում (մարտ, հունիս, սեպտեմբեր, դեկտեմբեր)					
			Տարեկան մաքրման ծառայություններ					
			շենքերի ճակատային մասի լվացում (252 քմ)՝ տարին մեկ անգամ (հուլիս ամսին)					
			դիտահորերի /ինչպես նաև կոյուղու/, ջրահեռացման համակարգերի մաքրում /ըստ պատվիրատուի պահանջի/					
			Ձյան տեղումների դեպքում մաքրման ծառայություններ					
			Շենքերի տանիքների վրա գոյացած ձյան, սառույցի, ինչպես նաև տանիքների եզրերից կախված սառցալեզվակների մաքրում՝ պատվիրատուի պահանջով /աշխատանքները պետք է սկսեն համապատասխան ծանուցումը ստանալուց հետո ոչ ուշ քան մեկ ժամվա ընթացքում/					

			կատարել ձյան մաքրման և հեռացման աշխատանքներ՝ այդ թվում մեքենայացված՝ հատուկ սարքավորումների միջոցով: Տարածքից հեռացնել կուտակված ձյունը, սառույցը, բանուկ մասում շաղ տալ ավազ և աղ /տեղումների ընթացքում՝ առնվազն ժամը մեկ/ /24 000քմ/					

ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

✓ Կատարողը պետք է մաքրման ծառայությունները մատուցի յուրաքանչյուր օրացույցային օր՝ մինչև առավոտյան ժամը 08:30, այդ ժամին տարածքը պետք լինի պատշաճ մաքրված վիճակում: Կատարողը ծառայությունները մատուցելիս չպետք է խոչընդոտի ՀՀ ՊԵԿ բնականոն աշխատանքային գործունեությանը և ետք է պահպանի ՀՀ ՊԵԿ ներքին կարգապահական կանոնները: Որոշ դեպքերում աշխատանքային գրաֆիկը սահմանվում է Պատվիրատուի կողմից և համաձայնեցվում է կողմերի միջև:

✓ Կատարողն յուրաքանչյուր օրացույցային օր պետք է յուրաքանչյուր շենքում ապահովի առնվազն երեք հերթապահություն իրականացնող աշխատակցի երկայություն (հերթապահների թիվը և նրանց կողմից մատուցվող ծառայության տեսակը համաձայնեցնել Պատվիրատուի հետ)՝ 24 ժամյա աշխատանքային րաֆիկով, ինչպես նաև պետք է ապահովի առնվազն մեկ կոնտակտային անձի առկայություն, որը հասանելի կլինի յուրաքանչյուր օրացույցային օր՝ շուրջօրյա: նդ որում, բացի պլանային մաքրման ծառայության իրականացումից, Կատարողը պարտավոր է Պատվիրատուի առաջին իսկ կանչով՝ առավելագույնը 10 րոպեի նթացքում ապահովել իր հերթապահ աշխատակցի ներկայությունը Պատվիրատուի կողմից մատնանշված վայրում և այնտեղ մատուցել այդ պահին պահանջվող առայությունները:

✓ Կատարողը պետք է իր աշխատակիցներին ապահովի Կատարողի տարբերանշանով համազգեստով:

✓ Մաքրման ծառայությունների ընթացքում օգտագործվող լվացող-մաքրող նյութերը, մաքրող և փայլեցնող կտորները, աղբի տոպրակները, զուգարանների ղթերը, օդի թարմացուցիչները, հեղուկ օճառները, սարքերը և սարքավորումներն ամբողջությամբ տրամադրվում են Կատարողի կողմից:

✓ Սանհանգույցի յուրաքանչյուր խցիկում կատարողը պետք է ապահովի մշտական երկուական սպիտակ գույնի առնվազն երկշերտ զուգարանի թղթի, իսկ ուրաքանչյուր լվացարանի մոտ համապատասխան տարայով(ում)՝ ախտահանող հեղուկ օճառի առկայություն:

✓ Սանհանգույցների պատերից մեկի վրա՝ տեսանելի վայրում, պետք է փակցված լինի տվյալ ամսվա հերթապահության թերթիկը, որը պետք է լրացվի երթապահությունն իրականացնող աշխատակցի կողմից՝ յուրաքանչյուր 2 ժամը մեկ:

✓ Կատարողը պետք է փոխհատուցի իր կողմից պատճառված նյութական վնասը:

✓ Կատարողը պարտավոր է տեղումնառատ ամիսներին, ըստ անհրաժեշտության, նախամուտքերի առջև տեղադրել խոզանականման ծածկույթով գորգեր սախապես համաձայնեցնելով պատվիրատուի հետ):

✓ Կատարողը պարտավոր է հնարավորինս սեղմ ժամկետում՝ ըստ մաքրման ծառայությունների մատուցման ժամանակացույցի, շտկել իր կողմից մատուցված ծառայությունը (ամենօրյա մաքրման ծառայությունները՝ մինչև տվյալ աշխատանքային օրվա ավարտը, շաբաթականը՝ մինչև շաբաթվա ավարտը, ամսականը՝ հաջորդող ամսվա 3-ը ներառյալ, եռամսյակայինը և տարեկանը՝ սահմանված ամսվանը հաջորդող ամսվա 3-ը ներառյալ, իսկ ձյան տեղումների դեպքում մուտքերի առջևից ձյան և սառույցի հեռացումը, ինչպես նաև ավազով և աղով մշակումը՝ մեկ ժամվա ընթացքում):

✓ Ըստ անհրաժեշտության դահլիճներում խորհրդակցություններից առաջ և հետո տարածքի մաքրում:

✓ Կատարողը կամ իր կողմից լիազորված անձը պարտավոր է շաբաթական մեկ անգամ ստորագրել պատվիրատուի կողմից կազմված մաքրման առայությունների մատուցման վերաբերյալ տեղեկագիրը, որը ամփոփված՝ երկու կողմերի ստորագրության առկայությամբ յուրաքանչյուր ամսվա առաջին աշխատանքային օրը՝ պետք է ներկայացվի պատվիրատուին:

✓ Կատարողը պետք է աղբահանությունը իրականացնի սանիտարահիգիենիկ կանոնների և նորմերի պահանջների պահպանմամբ:

✓ Աղբահանության կազմակերպումից հետո, անհրաժեշտության դեպքում, Կատարողը պետք է լվանա ճանապարհը և տարածքը:

✓ Աղբահանության իրականացման կարգը, այդ թվում՝ աղբահանության իրականացման ժամանակացույցը, աղբամանների տեղադրման վայրերը և դրանց եսակները համաձայնեցվում են Պատվիրատուի հետ:

✓ 2-րդ չափաբաժնի համար տրամադրված աղբամանները ենթակա չեն վերադարձման:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պետական եկամուտների կոմիտե	«ՔԱՍՏՈՄՍ ԲՐՈՔԵՐ» ՍՊԸ
ք. Երևան, Մ. Խորենացի 3,7	ք. Տաշիր, Պուշկինի փ., 5 թղմ., տ. 113
ՀՎՀՀ 02647057	ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ ՓԲԸ
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	Հ/Հ 1150001873163163
Հ/Հ 900011054013	ՀՎՀՀ 06959305
ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղար	տնօրեն Մեսրոպ Սահակյան
Է.ԳԵՎՈՐԳՅԱՆ _____ /ստորագրություն/	_____ (ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 2
«06» ապրիլի 2022 թ. կնքված
ՀՀՊԵԿ-ԳՀԾՁԲ-22/4 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հ/Հ	Բյուջետային ծախսերի տնտ. դասակ. հոդվածը*	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ծառայության Նախատեսվում է ֆինանսավորել 2022թ. ՀՀ պետական բյուջեի միջոցներով նախատեսված հատկացումների հաշվին, ըստ ամիսների՝ ընդ որում												
				հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	**Ընդամենը**
1	4239	90911100/16	Բնակտարածությունների մաքրման ծառայություններ 1				5 000 000	5 000 000	5 000 000	10 000 000	10 000 000	10 000 000	20 000 000	20 000 000	20 000 000	**20 000 000**
2	4239	90911100/18	Բնակտարածությունների մաքրման ծառայություններ 2				4 875 000	4 875 000	4 875 000	9 750 000	9 750 000	9 750 000	19 500 000	19 500 000	19 500 000	**19 500 000**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ. Խորենացի 3,7
ՀՎՀՀ 02647057
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011054013
ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղար

Է.ԳԵՎՈՐԳՅԱՆ
/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«ՔԱՍՏՈՄՍ ԲՐՈՔԵՐ» ՍՊԸ
ք. Տաշիր, Պուշկինի փ., 5 թղմ., տ. 113
ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ ՓԲԸ
Հ/Հ 1150001873163163
ՀՎՀՀ 06959305
տնօրեն Մեսրոպ Սահակյան

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 3
«06» ապրիլի 2022 թ. կնքված
ՀՀՊԵԿ-ԳՀԾՁԲ-22/4 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«06» ապրիլի 2022 թ. կնքված
ՀՀՊԵԿ-ԳՀԾՁԲ-22/4 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն